ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը, էթիկայի կանոնները, ինչպես նաեւ կարգավորվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց եւ հետեւյալ մարմիններում հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա.

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում.

2) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում.

4) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում.

5) Հայաստանի Հանրապետության նախարարությունների աշխատակազմերում.

6) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների աշխատակազմերում.

7) Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) աշխատակազմերում.

8) Կենտրանական բանկի աշխատակազմում

9) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմում.

10) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտում.

11) Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում.

12) Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների աշխատակազմերում.

13) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերում.

14) Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմում.

15) Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում.

16) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

2. Սույն օրենքը չի տարածվում քաղաքական, հայեցողական եւ քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց վրա, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

3. Սույն օրենքը չի տարածվում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վրա:

4. Սույն օրենքով սահմանված հանրային ծառայողներին վերաբերող դրույթները տարածվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա միայն սույն օրենքով սահմանված դեպքերում:

Հոդված 3. Հանրային ծառայությունը

1. Հանրային ծառայությունը պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը եւ պետական պաշտոնները:

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառույթների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաեւ օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

4. Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառույթների իրականացմանը:

Հոդված 4. Պետական պաշտոններ

1. Պետական պաշտոններն են՝ քաղաքական, հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարների տեղակալի օգնականի պաշտոնների), քաղաքացիական, ինչպես նաեւ պետական ծառայության պաշտոնները:

2. Քաղաքական պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է քաղաքական որոշումներ եւ համակարգում դրանց կատարումը: Քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը փոփոխվում է

քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Սույն օրենքի իմաստով քաղաքական պաշտոններն են Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, Հայաստանի Հանրապետության նախարարների եւ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների պաշտոնները:

4. Քաղաքական պաշտոնները, բացառությամբ ընտրովի քաղաքական պաշտոնների, կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն:

5. Քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց գործունեության սկզբունքների եւ կազմակերպման կարգի հետ կապված հարաբերությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հանրապետության Նախագահի հրամանագրերով եւ այլ իրավական ակտերով:

6. Հայեցողական պաշտոնը՝ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ եւ համակարգում դրանց կատարումը: Հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

7. Սույն օրենքի իմաստով՝ հայեցողական պաշտոններ են Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալներից մեկի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա առաջին տեղակալի եւ տեղակալներից մեկի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալներից մեկի, Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի, Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարի, Հայաստանի Հանրապետության նախարարների տեղակալների Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների եւ նրանց տեղակալների, Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանների, միջազգային կազմակերպություններին առընթեր (միջազգային կազմակերպություններում) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների եւ նրանց տեղակալների, Հայաստանի Հանրապետության մարզպետների եւ նրանց տեղակալների պաշտոնները, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականի պաշտոնները, Երեւանի վարչական շրջանի ղեկավարի եւ նրա տեղակալի պաշտոնները, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի եւ նրա տեղակալների, Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարների եւ ռեֆերենտների պաշտոնները, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականների եւ խորհրդականների պաշտոնները, Հայաստանի Հանրապետության նախարարների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

կառավարման մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների եւ այլն) ղեկավարների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության մարզպետների, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների պաշտոնները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականների, մամուլի քարտուղարի պաշտոնները, Հայաստանի Հանրապետության նախարարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ եւ այլն) ղեկավարների տեղակալների եւ անդամների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության մարզպետների տեղակալների օգնականների պաշտոնները, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալի օգնականի պաշտոնը:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված համապատասխան պաշտոնատար անձանց խորհրդականներին, մամուլի քարտուղարներին, օգնականներին և ռեֆերենտներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի լիազորությունների դադարման դեպքում նրանք շարունակում են կատարել իրենց պարտականությունները մինչեւ այդ պաշտոնում նոր նշանակում կատարելը:

9. Քաղաքացիական պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով որոշակի ժամանակահատվածով նշանակովի կամ ընտրովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կոլեգիալ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաեւ անհատական հիմունքներով ընդունում է որոշումներ եւ համակարգում դրանց կատարումը, իր պաշտոնավարման ժամանակահատվածում չի փոփոխվում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

10. Սույն օրենքի իմաստով՝ քաղաքացիական պաշտոններ են համարվում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի եւ անդամների, օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) ղեկավարների, նրանց անդամների, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների եւ դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի դատարանների նախագահների եւ դատավորների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների եւ դատախազների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնները:

11. Քաղաքացիական պաշտոն կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

12. Քաղաքացիական պաշտոնների առանձնահատկություններից ելնելով՝ այդ պաշտոնները զբաղեցնելու համար օրենքով կարող են սահմանվել նաեւ այլ պահանջներ:

13. Պետական ծառայության պաշտոնը՝ պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն է, որն զբաղեցնելու առանձնահատկությունները սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հոդված 5. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ իմաստները.

1) հանրային ծառայության պաշտոն՝ պետական եւ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով նախատեսված պաշտոն.

2) հանրային ծառայության պաշտոնների անվանացանկ՝ պետական եւ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերի միասնություն.

3) պետական եւ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկեր՝ պետական ծառայության յուրաքանչյուր տեսակի, ինչպես նաեւ համայնքային ծառայության համար նախատեսված՝ օրենքով սահմանված կարգով հաստատված պաշտոնների ցանկեր.

4) հանրային ծառայող՝ պետական եւ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որեւէ պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով հանրային ծառայության համապատասխան կադրերի ռեզերվում գտնվող անձ.

5) հանրային ծառայության կադրերի ռեզերվ՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով հանրային ծառայության պաշտոններ չզբաղեցնող հանրային ծառայողների եւ անձանց հանրույթ.

6) համապատասխան մարմին՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված մարմին.

7) հանրային ծառայության պաշտոնի անձնագիր (նկարագիր)՝ տվյալ պաշտոնը զբաղեցնող հանրային ծառայողի համար օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող եւ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար հանրային ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.

8) հանրային ծառայության դասային աստիճան (կոչում)՝ հանրային ծառայողին իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան շնորհվող որակավորման չափանիշ.

9) հանրային ծառայողների ատեստավորում՝ զբաղեցրած պաշտոնին հանրային ծառայողների մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշմանն ուղղված գործընթաց (միջոցառում).

10) հանրային ծառայողների վերապատրաստում՝ հանրային ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացման նպատակով մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործմանն ուղղված գործընթաց (միջոցառում).

11) ծառայողական քննություն՝ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում եւ կարգով հանրային ծառայողի պարտականությունների կատարմանն ու նրա գործունեությանն առնչվող հարցերի քննություն.

12) քաղաքացիական աշխատանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով՝ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան.

13) տեխնիկական սպասարկում իրականացնող անձ՝ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական, ինչպես նաեւ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող

անձանց լիազորությունների կատարմանն աջակցող անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձ.

14) հանրային ծառայողի ռոտացիա՝ օրենքով սահմանված դեպքում եւ կարգով հանրային ծառայողին նույն մարմնում (այդ թվում՝ նույն մարմնի այլ տարածքային ստորաբաժանում), ինչպես նաեւ այլ մարմին փոխադրում.

15) բարձրաստիճան պաշտոնատար անձ՝ Հանրապետության Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, նախարարները եւ նրանց տեղակալները, գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների դատախազները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները եւ այդ մարմինների անդամները, կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները եւ կենտրոնական բանկի խորհրդի անդամները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, վերահսկիչ պալատի նախագահը, նրա անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները, Երեւանի քաղաքապետը եւ նրա տեղակալները, մարզպետները եւ նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Հանրապետության Նախագահի խորհրդականները եւ օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականներն ու օգնականները, վարչապետի խորհրդականները եւ օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները, ինչպես նաեւ Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարը.

16) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ ներառյալ մինչեւ 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչեւ 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաեւ վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը եւ եղբայրները.

17) շահերի բախում՝ իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել.

18) բարձրաստիճան պաշտոնատար անձի վերադաս անձ՝ Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի, Հանրապետության Նախագահի խորհրդականների եւ օգնականների համար՝ Հանրապետության Նախագահը, Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի նախագահի խորհրդականների, օգնականների համար՝ Ազգային ժողովի նախագահը, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի համար՝ սահմանադրական դատարանի նախագահը, նախարարի, կառավարության աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարի, վարչապետի խորհրդականների եւ օգնականների համար՝ վարչապետը, նախարարների տեղակալների համար՝ նախարարը, գլխավոր դատախազի տեղակալների, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների

դատախազների համար՝ գլխավոր դատախազը, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների տեղակալների համար՝ մարմնի ղեկավարը, օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների անդամների համար՝ տվյալ մարմնի ղեկավարը, կենտրոնական բանկի նախագահի տեղակալների եւ կենտրոնական բանկի խորհրդի անդամների համար՝ կենտրոնական բանկի նախագահը, վերահսկիչ պալատի անդամների համար՝ վերահսկիչ պալատի նախագահը, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար, կառավարության աշխատակազմի ղեկավարը, Երեւանի քաղաքապետի, մարզպետների տեղակալների համար՝ համապատասխանաբար Երեւանի քաղաքապետը կամ մարզպետները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների համար՝ արտաքին գործերի նախարարը: Սույն կետում չթվարկված բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքի իմաստով համարվում են վերադաս չունեցող.

Հոդված 6. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները

1.Հանրային ծառայության հիմնական սկզբունքներն են՝

1) ՀՀ Սահմանադրության եւ օրենքների գերակայությունը.

2) մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.

3) հանրային ծառայության կայունությունը.

4) օրենքի առջեւ հանրային ծառայողների իրավահավասարությունը.

5) հանրային ծառայության հրապարակայնությունը.

6) հանրային ծառայողների քաղաքական զսպվածությունը.

7) քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին համապատասխան.

8) հանրային ծառայողների արհեստավարժությունը.

9) հանրային ծառայողների իրավական եւ սոցիալական պաշտպանվածությունը.

10) անկողմնակալությունը.

11) ազնվությունը.

12) հարգանքը անձի եւ նրա իրավունքների հանդեպ.

13) պատասխանատվության զգացումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ (ԿՈՉՈՒՄՆԵՐԸ), ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ

Հոդված 7. Հանրային ծառայության պաշտոնների դասակարգումը

1. Հանրային ծառայության պաշտոնների խմբերի եւ ենթախմբերի դասակարգման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

2. Հանրային ծառայության առանձին տեսակների պաշտոնների խմբերի համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 8. Հանրային ծառայության դասային աստիճանները (կոչումները)

1. Հանրային ծառայության դասային աստիճանների (կոչումների) սահմանման, ինչպես նաեւ դրանք շնորհելու, իջեցնելու, դրանցից զրկելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

2. Հանրային ծառայության առանձին տեսակների դասային աստիճանների (կոչումների) համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը

1.Հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի, ինչպես նաեւ համայնքային ծառայության համար նախատեսվում են պաշտոնների անվանացանկեր, որոնք հաստատվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Հոդված 10. Հանրային ծառայության պաշտոնների անձնագրերը (նկարագրերը)

1. Հանրային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր (նկարագիր):

2. Հանրային ծառայության պաշտոնների անձնագրերը (նկարագրերը) հաստատվում (փոփոխվում) են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

Հոդված 11. Հանրային ծառայության ընդունվելու իրավունքը

1.Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հանրային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող եւ պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պահանջները բավարարող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Հոդված 12. Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունեցող անձը

1. Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը տվյալ հանրային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը (ցանկերը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից բացի, պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել նաեւ այլ պահանջներ:

Հոդված 13. Հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

1. Հանրային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթով կամ օրենքով սահմանված այլ կարգով:

2. Հանրային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու հետ կապված հարաբերությունները սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 14. Հանրային ծառայողի ռոտացիան

1. Հանրային ծառայողների ռոտացիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

2. Ռոտացիայի դեպքում հանրային ծառայողի համար չի կարող սահմանվել փորձաշրջան:

Հոդված 15. Հանրային ծառայության ստաժը

1. Հանրային ծառայության ստաժը ներառում է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու, մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը համապատասխան մարմիններում պետական կամ համայնքային ծառայության պաշտոններում աշխատելու ողջ ժամանակահատվածը:

2. Հանրային ծառայության ստաժը չի ներառում օրենքով սահմանված կարգի խախտմամբ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաեւ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը օրենքի խախտմամբ համապատասխան մարմիններում պետական կամ համայնքային ծառայության պաշտոններում աշխատելու ողջ ժամանակահատվածը:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված մարմիններում քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հավասարեցվում է հանրային ծառայության ստաժին:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից բացի, պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող է սահմանվել նաեւ հանրային ծառայության ստաժը ներառող այլ ժամանակահատված:

Հոդված 16. Հանրային ծառայողի անձնական գործը

1. Հանրային ծառայողի անձնական գործը հանրային ծառայողի ծառայողական գործունեության մասին ամփոփ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի եւ նյութերի ամբողջությունն է:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ

Հոդված 17. Հանրային ծառայողի վերապատրաստումը

1. Հանրային ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման:

2. Պարտադիր վերապատրաստումից բացի, վերապատրաստում կարող է անցկացվել նաեւ հանրային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (նկարագրով) սահմանված հանրային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. Հանրային ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, համայնքների բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

4. Հանրային ծառայողների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 18. Հանրային ծառայողի ատեստավորումը

1.Հանրային ծառայողների ատեստավորման կամ կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 19. Հանրային ծառայության կադրերի ռեզերվը

1.Հանրային ծառայության կադրերի ռեզերվի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հոդված 20. Հանրային ծառայողի հիմնական իրավունքները

1. Հանրային ծառայողի հիմնական իրավունքներն են՝

1) զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2) իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին եւ ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը եւ բացատրություններ տալը.

3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ եւ նյութեր ստանալը.

4) սահմանված կարգով որոշումներ ընդունելը.

5) աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.

6) իր խախտված իրավունքները սահմանված կարգով բողոքարկելը.

7) աշխատանքի, առողջության պաշտպանության, անվտանգ եւ անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.

8) սոցիալական պաշտպանությունը եւ ապահովությունը.

9) իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից:

Հոդված 21. Հանրային ծառայողի հիմնական պարտականությունները

1. Հանրային ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) Սահմանադրության, օրենքների եւ այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.

2) մասնագիտական եւ ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ եւ կարողություններ ապահովելը.

3) օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը եւ հաշվետվություններ ներկայացնելը.

4) վերադաս մարմինների եւ պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տրված հանձնարարականները եւ ընդունած որոշումները կատարելը.

5) օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելը.

6) սահմանված կարգով եւ ժամկետներում առաջարկություններ, դիմումներ եւ բողոքներ քննության առնելը եւ դրանց ընթացք տալը.

7) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

8) հանրային ծառայողի էթիկայի կանոնները պահպանելը.

9) օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով շահերի հայտարարագիր ներկայացնելը.

10) սահմանված կարգով եւ ժամկետներում ատեստավորմանը եւ վերապատրաստմանը մասնակցելը:

Հոդված 22. Հանրային ծառայողի կողմից կատարվող տեղեկացումը (զեկուցումը)

1. Հանրային ծառայողն իր ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ պետք է օրենքով սահմանված կարգով համապատասխան պաշտոնատար անձանց տեղեկացնի այլ ծառայողների կողմից կատարած իրավախախտումների եւ հանրային ծառայությանն առնչվող ցանկացած անօրինական, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի գործողությունների մասին:

2. Հանրային ծառայողը, որը տեղեկացրել է սույն հոդվածի 1-ին մասում նշված անօրինական գործողությունների մասին եւ գտնում է, որ այդ կապակցությամբ ստացած պատասխանն իրեն չի բավարարում, կարող է դրա վերաբերյալ գրավոր տեղեկացնել համապատասխան մարմնի ղեկավարին կամ՝ իրավասու պետական մարմիններին:

3. Իրավասու մարմինների պետք է երաշխավորվի այն հանրային ծառայողի անվտանգությունը, որը բարեխղճորեն տեղեկացրել է սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումների վերաբերյալ:

4. Սույն հոդվածով նախատեսված տեղեկացման եւ հանրային ծառայողի անվտանգության երաշխավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 23. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Հանրային ծառայողին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձին արգելվում է.

1) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից.

2) իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.

3) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

4) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական եւ տեղեկատվական միջոցները, պետական եւ (կամ) համայնքային այլ գույքը եւ ծառայողական տեղեկատվությունը.

6) ծառայողական պարտականությունների առնչությամբ այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

7) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել սույն մասի 8-րդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8) համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ

անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ (բացառությամբ պատգամավորների).

9) պաշտոնից ազատվելուց հետո՝ առնվազն մեկ տարվա ընթացքում՝ ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:

2. Հանրային ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հանրային ծառայողը օրենքով սահմանված կարգով պարտավոր է առեւտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 եւ ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման: Հանրային ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:

3. Հանրային ծառայության առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով՝ այդ ծառայությունները կարգավորող օրենքներով կարող են սահմանվել այլ սահմանափակումներ:

Հոդված 24. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության սահմանափակումները

1. Հանրային ծառայողը եւ բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական կամ ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից:

2. Սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) անհատ ձեռնարկատեր լինելը.

2) առեւտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առեւտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման.

3) առեւտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը, առեւտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը կամ որեւէ այլ ձեւով առեւտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

3. Սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում՝

1) վստահության վրա հիմնված ընկերակցության մասնակից ավանդատու (կոմանդիստ) լինելը.

2) վարկային կամ խնայողական միության ավանդատու կամ անդամ լինելը.

3) առեւտրային կազմակերպությունից դուրս գալու կամ դրա լուծարվելու դեպքում հասանելիք գույքի մասը կամ դրա արժեքը ստանալը.

4) բանկում ավանդ, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը.

5) Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր ունենալը.

6) սեփականության իրավունքով պատկանող գույքը վաճառելը կամ որոշակի վճարի կամ հատուցման դիմաց վարձակալության հանձնելը.

7) փոխառության դիմաց տոկոսներ եւ այլ հատուցում ստանալը.

8) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձեւից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների եւ տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առեւտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի, կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առեւտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար հատուցում (ռոյալթի) ստանալը.

9) պատճառված վնասի (կրած կորստի) դիմաց հատուցում ստանալը:

4. Սույն օրենքի իմաստով ստեղծագործական աշխատանք է համարվում մշակույթի եւ արվեստի երկեր, գեղարվեստական, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ եւ արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական եւ գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ եւ ձեւեր, լեզուներ, բարբառներ եւ խոսվածքներ, ազգային ավանդույթներ եւ սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ եւ մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ) ստեղծելը կամ մեկնաբանելը:

5. Սույն օրենքի իմաստով գիտական աշխատանք է համարվում գիտական կազմակերպությունում, հիմնարկում, բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ այլ կերպ գիտահետազոտական, փորձա-կոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական, հետախուզական աշխատանքներ կատարելը:

6. Սույն օրենքի իմաստով մանկավարժական աշխատանք է համարվում ուսուցիչ, դասախոս (դոցենտ, պրոֆեսոր) աշխատելը կամ հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման եւ առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաեւ ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձեւավորմանը նպաստող եւ (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը:

Հոդված 25. Հանրային ծառայողին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձին հանձնարարականներ տալու սահմանափակումները

1. Հանրային ծառայողին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնք՝

1) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին.

2) հանձնարարականներ տվողի կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս են:

2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպքերում հանրային ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր տեղեկացնել հանձնարարականը տվողին եւ նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը)

գրավոր հաստատում է տրված հանձնարարականը, ապա հանրային ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության: Հանրային ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած պաշտոնատար անձը:

3. Հանրային ծառայության առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով՝ այդ ծառայությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող է սահմանվել հանձնարարականներ տալու այլ կարգ:

Հոդված 26. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի սոցիալական երաշխիքները

1. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի սոցիալական երաշխիքներն են `

1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ եւ անհրաժեշտ աշխատանքային պայմանները.

2) վարձատրություն, հավելավճար եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարները.

3) ամենամյա վճարովի արձակուրդը.

4) վերապատրաստումը՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը եւ դրա համար նախատեսված վարձատրությունը.

5) օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրությունը.

6) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում՝ նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովելը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով, նրա դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված նրա եւ նրա ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովումը՝ բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.

8) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային եւ այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցումը:

2. Հանրային ծառայողին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով հատկացվում է տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային ծառայողների եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի համար կարող են սահմանվել նաեւ այլ սոցիալական երաշխիքներ:

Հոդված 27. Հանրային ծառայողի վարձատրությունը եւ սոցիալական ապահովությունը

1. Յուրաքանչյուր հանրային ծառայող եւ բարձրաստիճան պաշտոնատար անձ առանց որեւէ խտրականության, ունի օրենսդրությամբ սահմանված չափով վարձատրության իրավունք:

2. Հանրային ծառայողը եւ բարձրաստիճան պաշտոնատար անձը ստանում է վարձատրություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետում:

3. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԸ

Հոդված 28. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները

1. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները նորմերի համակարգ է, որոնք միտված են ապահովելու հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի պատշաճ վարքագիծը, բացառել հանրային եւ մասնավոր շահերի բախումը, ամրապնդել հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ:

2. Սույն հոդվածի պահանջները վերաբերում են հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի ինչպես լիազորությունների իրականացմանը, այնպես էլ նրա ամենօրյա վարքագծին:

3. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոններն են՝

1) հարգել օրենքը եւ ենթարկվել օրենքին.

2) հարգել հանրության բարոյական նորմերը.

3) իր գործունեությամբ նպաստել իր զբաղեցրած պաշտոնի եւ իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության եւ հարգանքի ձեւավորմանը.

4) ամենուր եւ ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսեւորել իր պաշտոնին վայել վարքագիծ.

5) հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս.

6) բացառապես ծառայողական նպատակներով օգտագործել իր գործունեության առնչությամբ տրամադրված նյութատեխնիկական, ֆինանսական եւ տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը եւ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը,

7) ձգտել կառավարել իր ներդրումները այնպես, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները:

4.Սույն հոդվածով սահմանված՝ հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնները սպառիչ չեն: Էթիկայի լրացուցիչ կանոններ եւ դրանց նկատմամբ հսկողության այլ մեխանիզմներ կարող են սահմանվել տվյալ ոլորտի առանձնահատկությունները կարգավորող օրենքներով:

Հոդված 29. Նվերներ ընդունելու արգելքը

1.Հանրային ծառայողը եւ բարձրաստիճան պաշտոնատար անձը չպետք է ընդունի նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա, որը կապված կլինի իր լիազորությունների իրականացման հետ, բացառությամբ՝

1) պաշտոնական միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերների, պարգեւների և կազմակերպվող հյուրասիրության վրա.

2) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող գրքերի, համակարգչային ծրագրերի եւ նմանատիպ այլ նյութերի վրա.

3) կրթաթոշակի, դրամաշնորհի կամ նպաստի վրա, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքում՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում:

2. Սույն հոդվածի իմաստով “նվեր” հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոնատար անձ չհանդիսացող անձի: Սույն հոդվածի իմաստով “նվեր” հասկացությունը մասնավորապես չի ընդգրկում կենցաղային հյուրընկալությունը, ազգականից, բարեկամից կամ ընկերոջից ստացած նվերը, եթե նվերը էությամբ եւ չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջեւ հարաբերությունների բնույթին:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ից-3-րդ կետերում նշված գույքային ոչ սպառողական նվերը իր արժեքով գերազանցում է 100.000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա՝

1) վերադաս ունեցող հանարային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր վերադասի համաձայնությամբ, իսկ վերադաս չունեցողը՝ իր նախաձեռնությամբ նվերը տրամադրում է բարեգործության, կամ

2) այդ նվերը համարվում է համապատասխան մարմնի սեփականությունը և գույքագրվում է որպես այդպիսին:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ից-3-րդ կետերում նշված, սակայն սույն հոդվածի 3-րդ մասով չնախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 100.000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա վերադաս ունեցող հանրային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձը այդ մասին հայտնում է իր վերադասին:

5. Սույն հոդվածով թույլատրելի համարվող նվերի արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական գինը, որը նվեր ստացողը գիտեր կամ կարող էր իմանալ նվերի ընդունման պահին կամ դրա ընդունումից հետո:

ԳԼՈՒԽ 7. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ, ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ

Հոդված 30. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախումը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը, թեեւ ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաեւ՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի կամ իր անդամակցած ոչ առեւտրային կազմակերպության կամ իր մասնակցությամբ առեւտրային կազմակերպության ֆինանսական միջոցների կամ եկամուտների ավելացմանը կամ գույքային կամ իրավական դրության այլ բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի կամ իր անդամակցած ոչ առեւտրային կազմակերպության կամ իր մասնակցությամբ առեւտրային կազմակերպության պարտավորությունների մարմանը կամ նվազեցմանը.

3) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը կամ կազմակերպության մասնակից դառնալուն.

4) իր հետ փոխկապակցված անձին կամ իր կողմից անդամակցած ոչ առեւտրային կազմակերպության կամ իր մասնակցությամբ առեւտրային կազմակերպության մրցույթում հաղթելուն:

2. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների եւ դատախազների վրա:

Նշված անձանց շահերի բախման նորմերը կարող են սահմանվել տվյալ ոլորտի առանձնահատկությունները կարգավորող օրենքներով:

3. Ըստ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների բարձրաստիճան պաշտոնատար անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումը ունի համընդհանուր կիրառելիություն եւ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Հոդված 31. Բարձրաստիճան պաշտոնատար անձի գործողությունները շահերի բախման իրավիճակում

1.Շահերի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը, բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների եւ դատախազների, ինչպես նաեւ սույն օրենքի իմաստով վերադաս չունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձի, պարտավոր է իր վերադաս անձին գրավոր ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Մինչեւ վերադաս անձից գրավոր համաձայնություն ստանալը բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք չունի տվյալ հարցի վերաբերյալ գործողություն կատարել կամ որոշում կայացնել: Վերադաս անձը իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու եւ լուծելու իրավասությունը հանձնարարել այլ պաշտոնատար անձի, եթե դա օրենքով արգելված չէ:

2.Բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից ստանալ պարզաբանում կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին: Եթե ներկայացված տվյալները եղել են ամբողջական, ապա բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը շահերի բախման բացակայության մասին հիմք է վարույթը կարճելու համար, եթե այդպիսինը հարուցվի:

Հոդված 32. Գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման պարտականությունը

1.Բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքով նախատեսված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր:

2.Բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր:

3.Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելը կատարվում է այլ մարմնի կողմից առաջադրման միջոցով, ապա գույքի եւ եկամուտների հայտարարագրեր, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքում՝ նաեւ փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր թեկնածուն ներկայացնում է նաեւ առաջադրվելիս:

4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաեւ համատեղ ապրող չափահաս եւ չամուսնացած զավակը սույն օրենքով բարձրաստիճան պաշտոնատար անձի համար սահմանված դեպքերում և կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին են ներկայացնում իրենց գույքի եւ եկամուտների հայտարարագիրը:

Հոդված 33. Հայտարարագրման ժամկետները

1.Բարձրաստիճան պաշտոնատար անձը պաշտոնական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագրերը այդ օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում ներկայացնում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում հայտարարագրեր են ներկայացնում նաեւ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

Հոդված 34. Գույքի հայտարարագրման բովանդակությունը

1.Բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ նրա ամուսնու գույքի հայտարարագիրը պետք է ներառի նրանց սեփականության իրավունքով պատկանող՝

1) այն անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, (այսուհետ՝ անշարժ գույք) որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում.

2) այն շարժական գույքը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը (այսուհետ՝ շարժական գույք), որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ, ինչպես նաեւ տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները.

3) այն արժեթուղթը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) եւ (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը) (այսուհետ՝ արժեթուղթ եւ (կամ) այլ ներդրում), որը օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում.

4) այն փոխառությունը, որը հայտարարատուն հանձնել է կամ որը նրան վերադարձվել է հարկային տարում: Սույն օրենքի իմաստով փոխառություն է համարվում հայտարարատուի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքի հանձնումը՝ միեւնույն

գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի եւ նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելու պայմանով (այսուհետ՝ փոխառություն).

5) սույն մասի 1-4-րդ կետերում չնշված՝ 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույքը (այսուհետ՝ թանկարժեք գույք), որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում.

6) դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած):

2.Բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի հայտարարագրին պետք է կցվի նաեւ իր կողմից ստորագրված ցանկը, որում ներառվում են իր ամուսնու, իր հետ համատեղ ապրող ծնողի, ինչպես նաեւ համատեղ ապրող չափահաս եւ չամուսնացած զավակի անունը, հայրանունը, ազգանունը, ազգակցական կապը, ծննդյան տարեթիվը:

3.Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, ինչպես նաեւ իր հետ համատեղ ապրող չափահաս եւ չամուսնացած զավակի հայտարարագիրը պետք է ներառի նրանց սեփականության իրավունքով պատկանող՝

1) անշարժ գույքը, եթե հարկային տարում անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են անշարժ գույքի ձեռքբերման եւ օտարման բոլոր գործարքները.

2) շարժական գույքը, եթե հարկային տարում շարժական գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են շարժական գույքի ձեռքբերման եւ օտարման բոլոր գործարքները.

3) արժեթուղթը եւ (կամ) այլ ներդրումը, եթե հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման եւ (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման եւ (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են արժեթղթերի ձեռքբերման եւ (կամ) այլ ներդրման եւ օտարման բոլոր գործարքները.

4) փոխառությունը, եթե հարկային տարում փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են փոխառության հանձնման եւ վերադարձման բոլոր գործարքները.

5) թանկարժեք գույքը, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում:

4. Սույն օրենքում նշված հայտարարագրման ենթակա գույքի գինը (արժեքը) կամ արտարժույթով եկամուտը որոշելիս արտարժույթի համարժեքը հաշվարկվում է՝ ելնելով գործարքի օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքից, իսկ բնամթերքով իրականացրած գործարքի գինը (արժեքը)՝ ելնելով բնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքը հայտարարագրում արտացոլելու կարգով որոշվող գնից (արժեքից):

5. Գույքը հայտարարագրելիս պետք է նշվեն՝

1) անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, առկայությունը հարկային տարվա սկզբում եւ վերջում, ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը) եւ արժույթը.

2) շարժական գույքի դեպքում՝ շարժական գույքի տեսակը, մակնիշը եւ սերիան, առկայությունը հարկային տարվա սկզբում եւ վերջում, ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը) եւ արժույթը.

3) արժեթղթի եւ (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի եւ (կամ) այլ ներդրման արժույթը, գինը (արժեքը) հարկային տարվա սկզբում եւ վերջում, ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը).

4) փոխառության դեպքում՝ պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը եւ հայրանունը, հասցեն, փոխառության արժույթը, փոխառության գումարը (չափը) հարկային տարվա սկզբում եւ վերջում, հարկային տարում հանձնված եւ վերադարձված փոխառության գումարը (չափը).

5) թանկարժեք գույքի դեպքում՝ գույքի անվանումը, առկայությունը հարկային տարվա սկզբում եւ վերջում,գույքի ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը) եւ արժույթը.

6) դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի արժույթը, չափը հարկային տարվա հունվարի 1-ի սկզբին եւ դեկտեմբերի 31-ի ավարտին:

Հոդված 35. Եկամուտների հայտարարագրման բովանդակությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի, նրա ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, ինչպես նաեւ համատեղ ապրող չափահաս եւ չամուսնացած զավակի եկամուտների հայտարարագրում ընդգրկվում են հարկային տարում ստացած՝ սույն հոդվածով սահմանված եկամուտները եւ դրանց ստացման աղբյուրները:

2.Հայտարարատուի եկամուտների ստացման աղբյուր է այն անձը, որը հարկային տարում հայտարարատուին վճարել է սույն հոդվածով սահմանված եկամուտ: Մասնավորապես, եկամուտների ստացման աղբյուր կարող են հանդիսանալ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, առեւտրային, ոչ առեւտրային կազմակերպությունը, հիմնարկը, մասնաճյուղը, ներկայացուցչությունը, անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ կազմակերպությունը) կամ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերը եւ (կամ) պարտադիր այլ վճարները եկամտի ստացման աղբյուրի մոտ պահված լինելու դեպքում եկամուտները հայտարարագրվում են առանց այդ գումարների: Սույն կանոնը չի տարածվում «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող անձանց վրա:

3. Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձեւով ստացված հետեւյալ եկամուտները.

1) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.

2) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի

բանաձեւից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների եւ տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առեւտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առեւտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) եւ հեղինակային վարձատրությունը.

3) ստացված փոխառությունները (վարկերը) կամ տրված փոխառությունների (վարկերի) դիմաց ստացված տոկոսը եւ այլ հատուցումը.

4) շահաբաժինները.

5) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները).

6) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաեւ վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).

7) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացած).

8) ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները).

9) ապահովագրական հատուցումները.

10) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.

11) գույքը (բացառությամբ դրամական միջոցների) օտարելուց (այդ թվում՝ սույն օրենքի 8-րդ հոդվածում չնշված) ստացված եկամուտը.

12) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.

13) միանվագ վճարները.

14) գույքային իրավունքներից ստացված եկամուտը:

4. Հայտարարագրման ենթակա են նաեւ սույն հոդվածի 2-րդ մասով չսահմանված այլ եկամուտները՝ նշելով դրանց տեսակները եւ ստացման աղբյուրները:

5. Եկամուտը հայտարարագրելիս պետք է նշվի՝

1) եկամտի տեսակը.

2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը եւ հայրանունը, հասցեն.

3) եկամտի չափը (գումարը).

4) եկամտի արժույթը:

Հոդված 36. Փոխկապակցված անձանց մասին հայտարարագրի բովանդակությունը

1.Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում ընդգրկվում են՝

1) սահմանադրական դատարանի անդամի համար՝ սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք.

2) նախարարների եւ նրանց տեղակալների համար՝ նախարարության համակարգում պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք.

3) գլխավոր դատախազի, նրա տեղակալների, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների դատախազները համար՝ դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք.

4) կառավարությանն առընթեր օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարների եւ ղեկավարների տեղակալների համար՝ այդ մարմնում (ներառյալ կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումներում, դրա կառավարման ոլորտում գործող պետական մարմիններում, ինչպես նաեւ ենթակայությանը հանձնված պետական ոչ առեւտրային կազմակերպություններում) պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք.

5) օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների ղեկավարների եւ անդամների համար՝ այդ մարմնի ղեկավարի կամ անդամի պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք, ինչպես նաեւ այդ մարմնի կողմից կարգավորվող ոլորտում գործող առեւտրային կազմակերպություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք.

6) դատավորների համար՝ դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք:

2. Փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում պետք է նշվի փոխկապակցված անձի՝

1) անունը, հայրանունը, ազգանունը.

2) զբաղեցրած պաշտոնը:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասում թվարկված անձը կորցրել է կապը որեւէ փոխկապակցված անձի հետ եւ տեղեկատվության բացակայության պատճառով ի վիճակի չէ հայտարարագրելու նրանց որպես փոխկապակցված անձ, ապա նա հայտարարագրին կցում է համապատասխան հայտարարություն, նշելով ազգակցական կապը եւ անձի անունը, հայրանունը, ազգանունը:

Հոդված 37. Հայտարարագրի ռեեստրը եւ տվյալների հրապարակումը

1. Հայտարարագիրը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը այն զետեղում է հայտարարագրերի ռեեստրում:

2. Հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը եւ ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հրապարակման ենթակա տվյալների ցանկը չի կարող պարունակել անձը, գույքը նույնականացնող տվյալներ:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն ապահովում է հրապարակմանը ոչ ենթակա տվյալների պաշտպանությունը:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 38. Հանրային ծառայողի եւ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովները և դրանց կազմավորումը

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածում նախատեսված մարմիններում ստեղծվում են հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովներ:

2. Գլխավոր դատախազությունում կարող են ստեղծվել էթիկայի հաձնաժողովներ, որոնք պետք է ստուգեն էթիկայի կանոնների պահպանումը:

Դատավորների կողմից էթիկայի կանոնների պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաեւ ՀՀ դատական օրենսգրքով:

Սույն մասում նշված էթիկայի հանձնաժողովների ձեւավորման, գործունեության, էթիկայի կանոնների խախտման առնչությամբ վարույթ իրականացնելու կարգը սահմանվում է համապատասխան օրենքներով:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար ստեղծվում է էթիկայի առանձին հանձնաժողով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է սույն օրենքով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը սահմանվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի որոշմամբ:

4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը կազմված է հինգ անդամից: Հանձնաժողովի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, վճռաբեկ դատարանի նախագահի, գլխավոր դատախազի ներկայացմամբ՝ յուրաքանչյուրը մեկական անդամ սկզբունքով՝ վեց տարի ժամկետով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ եւ նախագահի մեկ տեղակալ:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել 30 տարին լրացած բարձրագույն կրթություն ունեցող, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, հասարակության կողմից ճանաչված եւ առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացին:

Հոդված 39. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի այլ գործունեությամբ զբաղվելու արգելքը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամը չի կարող լինել որեւէ կուսակցության կամ ներկայացուցչական որեւէ մարմնի անդամ կամ զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից:

Հոդված 40. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի անկախությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն ՀՀ Սահմանադրությանը եւ օրենքներին:

2. Հանձնաժողովի անդամը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որեւէ մարմնի կամ պաշտոնատար անձի եւ անկախ է իրեն առաջադրած եւ նշանակած պաշտոնատար անձանցից:

Հոդված 41. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցումը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակմանը հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

1) եթե դադարել է նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) եթե նա դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով՝ դիտավորյալ հանցագործության համար կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով՝ ազատազրկման է դատապարտվել անզգույշ հանցագործության համար..

3) եթե նա օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած:

2. Հանրապետության Նախագահը կարող է վաղաժամկետ դադարեցնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները, եթե վերջինս՝

1) թերացել է իր պաշտոնական պարտականությունները կատարելիս.

2) մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է հանձնաժողովի նիստերից.

3) խախտել է սույն օրենքի 39-րդ հոդվածի պահանջները:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Հանրապետության Նախագահը նշանակում է հանձնաժողովի նոր անդամ՝ սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Նման դեպքում, եթե մնացած պաշտոնավարման ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է նախորդ անդամի մնացած ժամանակահատվածին գումարած վեց տարի:

4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամը կարող է հրաժարական տալ՝ դիմելով Հանրապետության Նախագահին: Հանրապետության Նախագահը հանձնաժողովի անդամի հրաժարականն ընդունում է մեկ ամսվա ընթացքում: Հանձնաժողովի անդամը մինչեւ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հրաժարականն ընդունելը կարող է հետ վերցնել հրաժարական տալու մասին իր դիմումը:

5. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում թափուր տեղում նշանակումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 42. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի վարձատրությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամը սույն օրենքից բխող գործառույթների իրականացման համար ստանում է վարձատրություն:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված քաղաքացիական

ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափի տասնհինգապատիկի չափով, նախագահի տեղակալինը՝ տասնվեցապատիկի չափով, նախագահինը՝ տասնյոթապատիկի չափով:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության նյութատեխնիկական եւ կազմակերպական աջակցությունն իրականացնում է Հանրապետության Նախագահի աշխատակազմը:

Հոդված 43. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթները

1. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) բարձրաստիճան պաշտոնատար անձանց եւ սույն օրենքով նախատեսված այլ անձանց հայտարարագրերի ռեեստրի վարումը.

2) հայտարարագրերի վերլուծությունը եւ հրապարակումը.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտումը (բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների եւ դատախազների շահերի բախման) և էթիկայի կանոնների խախտման բացահայտումը (բացառությամբ սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների պաշտոնական լիազորությունների իրականացմանն առնչվող էթիկայի կանոնների խախտումների, ինչպես նաև պատգամավորների կողմից էթիկայի կանոնների խախտումների) եւ դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովին, կառավարությանը:

4) սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների պաշտոնական լիազորությունների իրականացման հետ չառնչվող էթիկայի կանոնների խախտման բացահայտումը եւ դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովին, սահմանադրական դատարանին և գլխավոր դատախազին.

5) իր իրավասության շրջանակում բացահայտված էթիկայի կանոնների խախտումների եւ շահերի բախման դեպքերի, դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը.

6) հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների եւ հայտարարագրի ներկայացման կարգի սահմանումը:

2. Էթիկայի հանձնաժողովը իրավունք ունի՝

1) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել եւ ստանալ էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

2) իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից, բացառությամբ՝ սահմանադրական դատարանի անդամների, դատարանների, դատավորների եւ դատախազների, պահանջել բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցի ուսումնասիրության ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ անցկացնել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական հետազոտություններ եւ ներկայացնել դրանց արդյունքները:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ այլ տեղեկությունները պետք է նրան ուղարկվեն հնարավորինս արագ, էթիկայի հանձնաժողովի հարցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ կամ հարցման հասցեատերը էթիկայի հանձնաժողովի պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում:

4. էթիկայի հանձնաժողովի անդամներն իրավասու են անարգել այցելել ցանկացած պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, ինչպես նաեւ ծանոթանալ էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութի եւ փաստաթղթի հետ: Պետական, ծառայողական, առեւտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ էթիկայի հանձնաժողովի անդամները կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

5. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է շահերի բախման բացահայտված դեպքերը եւ դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները:

Հոդված 44. Վարույթը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում

1. էթիկայի հանձնաժողովը վարույթ հարուցում է սեփական նախաձեռնությամբ:

2. էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ էթիկայի հանձնաժողովը վարույթ կարող է հարուցել՝

1) որևէ անձի դիմումի հիման վրա

2) իր նախաձեռնությամբ:

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի դիմումի հիման վրա՝ իր կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը ստուգելու հարցով:

3. Վարույթ հարուցելու պահից 5-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձը, որը 10 օրյա ժամկետում հանձնաժողովին ներկայացնում է իր առարկություններն ու բացատրությունները: Հարուցված վարույթի արդյունքում բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին իր եզրակացությունը տալիս է 1-ամսյա ժամկետում:

4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ եզրակացությունը եւ դրա հիման վրա համապատասխան պետական մարմնի լիազոր անձի որոշումը՝ եթե այդպիսին առկա է, տվյալ որոշումը կայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է տվյալ պետական մարմնի կայք էջում: Եթե ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս հանցակազմի հատկանիշներ, ապա հանձնաժողովը բոլոր նյութերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:

5. էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Նախագահին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձի վերադասին:

6. Հանձնաժողովի եզրակացությունը այն կայացնելուց հետո մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկել դատարան այն բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից, ում վարքագծի վերաբերյալ կայացվել է եզրակացություն:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

Հոդված 45. Հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաեւ ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները որակյալ կատարելու համար հանրային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսանքի տեսակներ: Հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները, ինչպես նաեւ դրանց կիրառման կարգը սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 46. Հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաեւ ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր:

2. Մինչեւ կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված հանրային ծառայողից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

3. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

4. Հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակները, ինչպես նաեւ կարգապահական տույժ կիրառելու կարգը եւ դրա հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 47. Հանրային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը

1. Պետական կամ համայնքային ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ հանրային ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով:

2. Հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատման հիմք է նաեւ սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը:

ԳԼՈՒԽ 10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 48. Վեճերի լուծումը եւ պատասխանատվությունը հանրային ծառայության մասին օրենսդրությունը խախտելու համար

1. Հանրային ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Հանրային ծառայության մասին օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 49. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

2. 2012 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-164-Ն օրենքը:

3. Սույն օրենքով նախատեսված գույքի եւ եկամուտների հայտարարագրերը 2011 թվականի համար ներկայացվում են մինչև 2012 թվականի ապրիլի 15-ը:

4. Սույն օրենքի 38-րդ, 39-րդ, 40-րդ և 42-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2011 թվականի նոյեմբերի 1-ին: Էթիկայի հանձնաժողովն իր գործունեությունը սկսում է ոչ ուշ, քան 2012 թվականի հունվարի 20-ը:

Հոդված 50. Սույն օրենքին այլ իրավական ակտերը համապատասխանեցնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տաս ամսվա ընթացքում, սույն օրենքին համապատասխանեցնել հանրային ծառայության եւ դրա հետ կապված հարաբերություններ կարգավորող նորմեր պարունակող իրավական ակտերը:

Հոդված 51. Հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելը

1. Համապատասխան մարմիններում հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը, հաստիքացուցակը, հանրային ծառայության պաշտոնների անձնագրերը (նկարագրերը) ենթակա են հաստատման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ութերորդ ամսվա ամսի 1-ին, եթե մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը չեն հաստատվել:

2. Համապատասխան մարմինների հաստիքացուցակը հաստատում (փոփոխում) է համապատասխան մարմնի ղեկավարը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ՝ Հեղինե Բիշարյան և Իշխան Խաչատրյան	«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ. 1. 5-րդ հոդվածի 16-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «բարձրաստիճան անձի հետ փոխկապակցված անձինք՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ առաջին աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի առաջին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:	1. Չի ընդունվել.	1. Նախագծի 5-րդ հոդվածի 16-րդ կետում առկա խմբագրությամբ առավել հստակ և սպառիչ են թվարկված, թե ովքեր են հանդիսանում բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձիք:
	2. Օրենքի նախագծից հանել 29-րդ հոդվածի 4-րդ կետը:	2. Ընդունվել է.	2. Նախագծի 29-րդ հոդվածն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ:
	3. Օրենքի նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ կետի 6-րդ տողի «և» բառը հանել:	3. Ընդունվել է	3. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	4. Առաջարկում ենք օրենքի նախագծով սահմանել առանձին դրույթ, ըստ որի կամրագրվի, որ էթիկայի հանձնաժողովի	4. Ընդունվել է մասնակի.	4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները նախատեսվել են բարձրաստիճան

	անդամները նույնպես հանրային ծառայողներ են, և հանրային ծառայության օրենքը տարածվում է նաև նրանց վրա: Պետք է օրենքով նաև սահմանվի, թե էթիկայի հանձնաժողովի անդամները ում պետք է ներկայացնեն իրենց եկամուտների հայտարարագիրը և որ մարմինը պետք է սահմանի վերահսկողություն նրանց գործունեության, եկամուտների հայտարարագրման հետ կապված:		պաշտոնատար անձանց ցանկում: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ էթիկայի հանձնաժողովի անդամների կողմից եկամուտների հայտարարագիր կներկայացվի, եթե հանձնաժողովի անդամը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան համարվում է բարձրաստիճան պաշտոնատար անձ: Իսկ այդ դեպքում նշված հարաբերությունների առանձին կարգավորման անհրաժեշտությունը չկա, քանի որ այն արդեն իսկ կարգավորված է նախագծով:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Բալասանյան	1. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 4-րդ հոդվածում քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնելու համար սահմանված չափանիշների մեջ թվարկված են՝ «...ունեն պետական կառավարման ոլորտում աշխատանքային փորձ և տիրապետում են հայերենին», այս չափանիշները ուղղակի չեն ինչպես դրանք որոշելու, այնպես էլ ստուգելու տեսանկյունից, նախ «աշխատանքային փորձ» հասկացությունը որևէ իրավական ակտում բացված չէ և եթե անգամ այն նույնացնենք «աշխատանքային ստաժ» հասկացության հետ, ապա նախագծում սահմանված չէ, թե տվյալ աշխատանքային գործունեության որ որոշակի ժամկետն է, որ կարելի է համարել բավարար փորձ, քանի, որ աշխատանքային ստաժը որպես կանոն որակյալ հատկանիշ է պարունակում որոշակի հստակ ժամանակահատվածի դեպքում, կախված այն աշխատանքի բարդությունից և ծավալից, որին հավակնում է անհրաժեշտ ստաժ ունեցող անձը: Այդ տեսանկյունից անհասկանալի և երկակի մեկնաբանության տեղիք է տալիս նաև «տիրապետում է հայերենին» չափանիշը, քանի որ տիրապետելու մակարդակը, այն ստուգելու	1. Ընդունվել է.	1. Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	եղանակը և իրավասու սուբյեկտը անորոշ են: Վերը շարադրվածի հիմնավորմամբ անհրաժեշտ է նախագծից հանել այդ չափորոշիչները, կամ դրանք որոշակիացնել, սահմանափակելով կամայականությունների հնարավորությունը և կոռուպցիոն ռիսկերը:		
	2. Նախագծի 4-րդ հոդվածում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների ղեկավարների պաշտոնները թվարկված են ինչպես հայեցողական պաշտոնների թվում, այնպես էլ քաղաքացիական պաշտոնների թվում, որը ընդունելի չէ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների ղեկավարների պաշտոնները իրենց բնույթով և սահմանմամբ չեն կարող համապատասխանել հայեցողական պաշտոններին, ուստի առաջարկում եմ այդ պաշտոնները հանել հայեցողական պաշտոնների շարքից և թողնել միայն քաղաքացիական պաշտոնների շարքում:	2. Չի ընդունվել	2. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Նախագծի 4-րդ հոդվածում հստակ տարանջատված են <<հայեցողական պաշտոն>> և <<քաղաքացիական պաշտոն>> հասկացությունները, մասնավորապես՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջիններիս միջև հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում, իսկ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձը չի փոփոխվում:
	3. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում՝ ի թիվս հանրային ծառայողների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց նույնպես արգելվում է՝ «իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել», այս դրույթը ընդունելի չէ, ունի տարաբնույթ մեկնաբանելու հնարավորություն հատկապես կուսակցությունների առաջադրմամբ նշանակված քաղաքական և հայեցողական պաշտոններ գբաղեցնող անձանց դեպքում, ինչպես նաև այս կամ այն կուսակցությունը ներկայացնող պատգամավորի, կամ համամասնական ընտրակարգով նշանակված պատգամավորի դեպքում, երբ տվյալ	3. Ընդունվել է մասնակի	3. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. 1. Հանրային ծառայողին եւ բարձրաստիճան պաշտոնատար անձին արգելվում է. 2) իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.

	պաշտոնատար անձը իր գործողություններում, հայտարարություններում օբյեկտիվորեն չի կարող չանդրադառնալ և չբարձրաձայնել իր անձնական կարծիքը, որը բխում է տվյալ կուսակցության ծրագրային դրույթներից, կամ արտահայտել իր քաղաքական դիրքորոշումը որևէ հարցի վերաբերյալ, որը որպես կանոն արտահայտում է տվյալ կուսակցության կարծիքը, վերջապես քաղաքական որոշումներ ընդունելու իրավունքը, որը պատկանում է քաղաքական պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց չի կարող տարանջատվել կուսակցություններից, քանի որ քաղաքականությունը կերտում են կուսակցությունները, իսկ քաղաքական որոշումներով էլ այն իրականացվում է, հետևաբար քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց սահմանափակել իրենց գործողություններում ընդգծել և մատնանշել կուսակցություններին, որը կարող է գնահատվել որպես վերաբերմունքի քարոզում անընդունելի է, ոստի այս դրույթը նախագծից անհրաժեշտ է հանել: 4. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում՝ ի թիվս հանրային ծառայողների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց նույնպես արգելվում է՝ «համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, երբ նրանց ծառայությունը կապված միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ», այս դրույթը չի կարելի տարածել բացառապես բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա, քանի որ այն քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձինք, որոնք ունեն օգնականներ, խորհրդականներ չպետք է կաշկանդված լինեն վերջիններիս ընտրության հարցում, քանի որ ըստ էության իրենք են որոշում իրենց աշխատանքների առավել արդյունավետ	4. Ընդունվել է մասնակի	4. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում բացառություն է սահմանվել պատգամավորների համար՝ նկատի ունենալով վերջիններիս պաշտոնի առանձնահատկությունները:

	կազմակերպման եղանակները և անձանց կազմը, այդ իսկ պատճառով այդ պաշտոնները չեն զբաղեցվում մրցույթով և ազգակցական կամ խնամիական կապը չի կարող բացասական ազդեցություն ունենալ սուբյեկտիվիզմի դրսևորման առումով: Նշված նկատառումներով առաջարկում եմ այդ սահմանափակումը նախագծից հանել: 5. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է «Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի սոցիալական երաշխիքները»՝ սակայն անհասկանալի է, թէ ինչ պատճառաբանությամբ 7-րդ կետում սահմանված դրույթը՝ օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով ծառայողի և նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովումը ուղղակիորեն վերաբերում է միայն հանրային ծառայողներին, և չի տարածվում նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա, իմ կարծիքով անհրաժեշտ է այդ սոցիալական երաշխիքը տրամադրել նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց: 6. Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ «... ապագայում աշխատանքի անցնելու վերաբերյալ առաջարկությունները» բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից էթիկայի հանձնաժողովին ներկայացնելու պարտականությանը նույնպես անիրատեսական է, ունի բազմակի մեկնաբանություն և տալիս է սուբյեկտիվիզմի դրսևորման լայն հնարավորություն, քանի որ առաջարկությունը որպես այդպիսին չի կարող համարվել իրավական չափանիշ, կամ դրա առկայությունը կամ բացակայությունը ապացուցող հիմնավոր ապացույցներ մատնանշել որպես կանոն հնարավոր չէ, ուստի այդ դրույթը նույնպես	5.Ընդունվել է 6.Ընդունվել է.	5.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: 6.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	ստբյեկտիվ մեկնաբանությունների տեղիք է տալիս, մեծացնելով կոռուպցիոն ռիսկերը, հետևաբար անհրաժեշտ է այն հանել նախագծից: 7. Նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը տարածել նաև այդ անձանց հետ համատեղ ապրող ծնողի չափահաս չամուսնացած զավակի վրա իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանություններով. Բարձրաստիճան պաշտոնատար անձը և նրա հետ համատեղ ապրող ծնողը չափահաս չամուսնացած զավակը հանդիսանում են գույքային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ, որոնք Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ազատ տնօրինել, տիրապետել և օգտագործել գույքը և պարտավոր չեն ուրիշի ստանձնած պարտավորությունն պարտականություններ կրել, իսկ գույքի հայտարարագրումը՝ կազմի և քանակի բացահայտումը թեկուզև իր ծնողին, կամ զավակին կարող է որոշակի խոչընդոտներ առաջացնել այդ իրավունքների ազատ իրականացման համար: ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ սեփականության իրավունքը հնարավորինս անհատականացված է, այն ինքնաբերաբար չի տարածվում որևէ այլ անձի իրավունքների վրա (բացի որոշակի բացառություններից, օրինակ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը և այլն), առանց տվյալ անձի կամաարտահայտության, համաձայնության, այսինքն անգամ ծնող և զավակ հարաբերություններում գույքային իրավունքը	7.Չի ընդունվել	7.Նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ համատեղ ապրող ծնողի և չափահաս չամուսնացած զավակի կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը սահմանվել է դեռևս 2006 թվականին «Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով: Գտնում ենք, որ նշված մոտեցումը անհրաժեշտ է նախատեսել նաև ներկայացված նախագծում: Այս դրույթը բացարձակապես չի խոչընդոտում ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով իրենց պատկանող գույքի ազատ տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքի իրականացմանը և չի խախտում որևէ իրավունք: Նշված դրույթը կարող է հանդիսանալ լրացուցիչ անհրաժեշտ երաշխիք բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար:

	որպես կանոն փոխանցվում է կողմի(երի) համաձայնությամբ (նվիրատվություն, ժառանգություն, կտակ և այլն), այսինքն գույքային հարաբերությունները չափահաս գործունակ անձանց միջև կարող են առաջանալ միայն նրանց կամաարտահայտությամբ: Այդ պահանջը ընդունելի չէ նաև հենց իսկ տվյալ նախագծով սահմանված «Շահերի բախման» ինստիտուտի տեսանկյունից՝ մի կողմից նախագիծը օբյեկտիվորեն տարանջատում և մեկուսացնում է բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունների կատարման անաչառությամբ պայմանավորված հանրային շահը բարձրաստիճան պաշտոնատար անձանց փոխկապակցված անձանց մասնավոր շահից, իսկ մյուս կողմից դրանք ընդհանրացնում հաշվի չառնելով այլ անձանց հիմնական իրավունքները, այսինքն նախագիծը մի կողմից արգելում է բարձրաստիճան պաշտոնատար անձին իր պարտականությունների կատարման ժամանակ առնչվել իրեն փոխկապակցված անձանց շահերին, այդ թվում նաև գույքային, մյուս կողմից սուբյեկտիվորեն պահանջվում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ համատեղ ապրող ծնողը և չափահաս չամուսնացած զավակը ներգրավվեն բարձրաստիճան պաշտոնատար անձի պարտականություններում՝ նրանց նկատմամբ սահմանելով պարտականություն, որը բխում է ոչ նրանց ցանկությամբ ու նախաձեռնությամբ ձեռք բերված իրավունքից, որով ակնհայտորեն խախտվում է իրավունքի համաչափության սկզբունքը, այսինքն՝ անձն անկախ իր կամքից ուրիշի պարտավորություններով ներգրավվում է իրեն համար ոչ ցանկալի գործընթացի, ծանրաբեռնվում է լրացուցիչ պարտականությամբ, որի ընտրության իրավունքը ի սկզբանե պատկանում է իրեն, պետք է բխի նրա կամքի ազատ դրսևորումից և		

	երաշխավորված է Սահմանադրությամբ: Բացի այդ լուրջ հակասություն է առաջանում բարձրաստիճան պաշտոնատար անձանց, որպես աշխատող (ծառայող) Սահմանադրությամբ և ՀՀ աշխատանքային օրենսգրքով երաշխավորված՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացման հարցում, քանի որ նրա հետ համատեղ ապրող ծնողը և չափահաս չամուսնացած զավակը ունենալով ինքնուրույն դիրքորոշում տվյալ անձի տվյալ պաշտոնը զբաղեցնելու հետ կապված սեփական սուբյեկտիվ նկատառումներով (քաղաքական հայացքներ, տնտեսական, նյութական, բարոյահոգեբանական շահ այլն) կարող են ազդել և խոչընդոտել նրանց հետ փոխկապակցված անձին տվյալ պաշտոնը զբաղեցելուն հավակնելու, կամ պաշտոնավարումը շարունակելու նրա Սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված ազատ ընտրության իրավունքին, ուղղակի նրան ոչ լրիվ տեղեկացնելով իրենց սեփականությունը հանդիսացող հայտարարագրման ենթակա գույքի կազմի, կամ քանակի մասին, որով անկախ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամքից կխախտվի օրենքի պահանջը և կառաջացնի ոչ բարենպաստ իրավական հետևանքներ: Ի նկատի ունենալով վերոգրյալը առաջարկում ենք նախագծից հանել բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից նաև այդ անձանց հետ համատեղ ապրող ծնողի և չափահաս չամուսնացած զավակի ունեցվածքի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պահանջը, կամ նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝ «Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից՝ համատեղ ապրող ծնողի և չափահաս չամուսնացած զավակի ունեցվածքի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով հայտարարագիր չներկայացնելը, կամ ոչ ամբողջական		

	ներկայացնելը չի կարող նրա նկատմամբ առաջացնել բացասական իրավական հետևանքներ, եթե բացակայում է տվյալ բարձրաստիճան պաշտոնատար անձի դիտավորությունը, կամ անփութությունը		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Դավիթ Հարությունյան և Կ. Նահապետյան	1. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում «50.000» թվից հետո լրացնել «նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ» բառերը: 2. Նախագծի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«Հոդված 29. Նվերներ ընդունելու արգելքը*** 1.Հանրային ծառայողը եւ բարձրաստիճան պաշտոնատար անձը չպետք է ընդունի նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա, որը կապված կլինի իր լիազորությունների իրականացման հետ, բացառությամբ՝ 1) պաշտոնական միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերների, պարգեւների և կազմակերպվող հյուրասիրության վրա. 2) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող գրքերի, համակարգչային ծրագրերի եւ նմանատիպ այլ նյութերի վրա. 3) կրթաթոշակի, դրամաշնորհի կամ նպաստի վրա, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքում՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում: 2. Սույն հոդվածի իմաստով “նվեր” հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոնատար անձ չհանդիսացող	1.Ընդունվել է. 2.Ընդունվել է.	1.Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում լրացվել է համապատասխան բառերը: 2.Նախագծի 29-րդ հոդվածը շարադրվել է առաջարկվող խմբագրությամբ:

	անձի: Սույն հոդվածի իմաստով “նվեր” հասկացությունը մասնավորապես չի ընդգրկում կենցաղային հյուրընկալությունը, ազգականից, բարեկամից կամ ընկերոջից ստացած նվերը, եթե նվերը էությամբ եւ չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջեւ հարաբերությունների բնույթին: 3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ից-3-րդ կետերում նշված գույքային ոչ սպառողական նվերը իր արժեքով գերազանցում է 100.000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա՝ 1) վերադաս ունեցող հանարային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր վերադասի համաձայնությամբ, իսկ վերադաս չունեցողը՝ իր նախաձեռնությամբ նվերը տրամադրում է բարեգործության, կամ 2) այդ նվերը համարվում է համապատասխան մարմնի սեփականությունը և գույքագրվում է որպես այդպիսին: 4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ից-3-րդ կետերում նշված, սակայն սույն հոդվածի 3-րդ մասով չնախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 100.000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա վերադաս ունեցող հանրային ծառայողը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձը այդ մասին հայտնում է իր վերադասին: 5. Սույն հոդվածով թույլատրելի համարվող նվերի արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական գինը, որը նվեր ստացողը գիտեր կամ կարող էր իմանալ նվերի ընդունման պահին կամ դրա ընդունումից հետո:		
	3. Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասում «նպաստում է» բառերից հետո լրացնել «կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել» բառերը:	3.Ընդունվել է. 4.Ընդունվել է.	3.Նախագծի 30-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացումը: 4.Նախագիծը խմբագրվել է:

	4. Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասից «, ինչպես նաև հայտարարագրում են ոչ առևտրային կազմակերպություններին, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններին իրենց անդամակցությունը, և ապագայում աշխատանքի անցնելու կապակցությամբ առաջարկությունները» բառերը հանել: 5. Նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասում «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «բարձրաստիճան պաշտոնատար անձի համար սահմանված դեպքերում և» բառերը: 6. Նախագծի 38-րդ հոդվածի 3-րդ մասում «սույն օրենքով և» բառերը փոխարինել «սույն օրենքով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը սահմանվում է» բառերով:	5.Ընդունվել է. 6.Ընդունվել է.	5.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: 6.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան	1. Թեև օրինագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 30.2 հոդվածի պահանջներից, որի համաձայն «Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք: Հանրային ծառայության սկզբունքները և կազմավորման կարգը սահմանվում են օրենքով», սակայն օրինագծով տրված չեն հանրային ծառայության կազմավորման կարգը, իսկ սկզբունքները թերի են: 1.1. Օրինագծի 2-րդ և 3-րդ հոդվածների 1-ին մասերում՝ ըստ վերաբերելիության հանրային ծառայության տեսակներում առաջարկվում է	1. Չի ընդունվել. 1.1.Չի ընդունվել.	1. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծով սահմանվում են հանրային ծառայության ընդհանուր կարգավորումները, իսկ հանրային ծառայության տեսակ հանդիսացող առանձին ծառայությունների՝ պետական ծառայության, համայնքային ծառայության կազմավորման կարգն ու համապատասխան սկզբունքները նախատեսված են ճյուղային օրենսդրությամբ: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները, այդ թվում կազմավորման կարգը, սկզբունքները /քաղ.ծառ. մասին օրենքի 5-րդ հոդված/ և այլն արդեն իսկ նախատեսված և սպառիչ կարգավորման են ենթարկված «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: 1.1. Ներկայացվող հարցը բազմիցս քննարկվել է, սակայն նկատի ունենալով կատարվող ծավալուն փոփոխությունները, ներկայիս փուլում

	ընդգրկել նաև պետական և համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների խորհրդի անդամներին և պաշտոնատար անձանց, ՀՀ կենտրոնական բանկի և ֆինանսական հաշտարարի գրասենյակի աշխատակիցներին:		առաջարկվող փոփոխությունների նախատեսումը հետաձգվել է: Այս փուլում ընտրվել են թիրախային խմբերը, իսկ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ օրենքի կիրառման փուլում: Ինչ վերաբերվում է ֆինանսական հաշտարարի գրասենյակի աշխատակիցներին, ապա «Ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված են նշված մարմնի ստեղծման նպատակներն ու գործառույթները, որոնց էությունը կայանում է առաջին հերթին մասնավոր իրավահարաբերություններում ծագող վեճերի կարգավորման մեջ, որի արդյունավետ իրականացման համար նշված աշխատակիցները, գտնում ենք, չպետք է հանդիսանան հանրային ծառայողներ: Իսկ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների կարգավիճակի առանձնահատկությունները կարգավորված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով՝ ելնելով՝ կենտրոնական բանկի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված առանձնահատկություններից:
	1.2 Օրինագծի 6-րդ հոդվածի 1-ի կետը համալրել հետևյալ սկզբունքներով՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդին ծառայելը, ժողովրդավարությունը և օրինականությունը, մարդասիրությունը և սոցիալական արդարությունը, իշխանությունների բաժանումը օրենսդիրի, գործադիրի և դատականի: Նույն կետի 6) ենթակետի "հանրային ծառայողների քաղաքական զսպվածությունը" բառերը փոխարինել "հանրային ծառայողների քաղաքական չեզոքությունը և պետությունից կրոնական միավորների անջատումը" բառերով: Այս սկզբունքը նշանակում է, որ պետական մարմիններում չեն կարող կազմավորվել	1.2. Չի ընդունվել.	1.2. Նախագծով նախատեսվել են կոնկրետ հանրային ծառայության համար անհրաժեշտ և բնորոշ սկզբունքներ, իսկ ինչ վերաբերում է այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են ժողովրդավարությունը, իշխանությունների բաժանումը օրենսդիրի, գործադիրի և դատականի և այլն, ապա դրանք հանդիսանում են ընդհանուր սկզբունքներ, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և պետք է կիրառելի լինեն բոլոր բնագավառներում: Ինչ վերաբերում է օրինականության սկզբունքին, ապա այն արդեն իսկ բխում է նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված ՀՀ Սահմանադրության եւ օրենքների գերակայության, օրենքի առջեւ հանրային ծառայողների իրավահավասարության

	քաղաքական կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորների կառուցվածքներ, բացառությամբ արհեստակցական միություններից:		և այլ սկզբունքներից: Իսկ Հանրային ծառայողների քաղաքական չեզոքության և պետությունից կրոնական միավորների անջատման սկզբունքն ըստ էության շատ ավելի նեղ է, քան նախագծում հիշատակված հանրային ծառայողների քաղաքական զսպվածության սկզբունքը: Բացի այդ խոսք կարող է գնալ զուտ քաղաքական զսպվածության մասին, քանի որ պարզ չէ, թե, օրինակ, քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը ինչպես կարող է լինել քաղաքականապես չեզոք:
	1.3 Անհրաժեշտ է վերացնել 3-րդ և 4-րդ հոդվածների միջև, ինչպես նաև այս հոդվածների և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի միջև առաջացած հակասությունները՝ տրված հասկացությունների միջև տարբերության մասով /օրինակ մշտապես գործող հանձնաժողովների դեպքում մի դեպքում դրանցում ընդգրկվածները համարվում են հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, մյուս դեպքում՝ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող/:	1.3.Չի ընդունվել	1.3. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Նախագծի 4-րդ հոդվածում հստակ տարանջատված են «հայեցողական պաշտոն» և «քաղաքացիական պաշտոն» հասկացությունները, մասնավորապես՝ մի դեպքում խոսքը գնում է մշտապես գործող հանձնաժողովների ղեկավարների, իսկ մյուս դեպքում՝ ղեկավարների օգնականներ, խորհրդականների և այլ պաշտոնատար անձանց մասին: Ինչ վերաբերում է նախագծի՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հետ հակասությանը, ապա պետք է նկատի ունենալ, որ նախագծի հետ միաժամանակ փաթեթում ընդգրկված է նաև «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով արդեն իսկ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել համապատասխան դրույթները:
	2. Օրինագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հանրային ծառայողին և բարձրաստիճան պաշտոնատար անձին արգելվում է իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչը կիրառելի չէ ՀՀ Աժ	2. Ընդունվել է.	2. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի համաձայն խոսքը գնում է ոչ թե կուսակցությունների նկատմամբ վերաբերմունք քարոզելու, այլ կուսակցությունների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու մասին:

	պատգամավորների և համամասնական ընտրակարգով ընտրվող այլ անձանց համար /հետևաբար առաջարկվում է փոփոխել այս հոդվածը/:		
	3. Օրինագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողին և բարձրաստիճան պաշտոնատար անձին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ առնվազն մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում: Թեև սահմանափակումը նպատակ ունի վերացնել հնարավոր շահերի բախումը, սակայն առերևույթ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 32 հոդվածի առաջին մասով երաշխավորված աշխատանքի ընտրության ազատության սկզբունքին, որն ի դեպ բացարձակ իրավունք է և չի սահմանափակվում սահմանադրության 43-44 հոդվածներով:	3. Չի ընդունվել.	3. Նախագծի 23-րդ հոդվածը բոլորովի չի հակասում ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով ամրագրված աշխատանքի ընտրության ազատությանը: Հանրային ծառայությանը վերաբերում է ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածը, որը հանդիսանում է հատուկ դրույթ՝ հանրային ծառայողների համար աշխատանքի ազատության տեսանկյունից և բոլորովին էլ չսահմանափակելով աշխատանքի ընտրության ազատությունը՝ այդուհանդերձ որոշակի երաշխիքներ է ստեղծում էթիկայի կանոնների պահպանման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
	4. Թեև հանրային ծառայության մասին օրինագծին անդրադարձել է նաև ՀՀ կառավարությունը՝ միջազգային պարտավորությունների կատարման շրջանակում ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում, սակայն դրանում արտացոլված բազմաթիվ դրույթներ ներառված չեն օրինագծում.	4. Չի ընդունվել.	4. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածը՝ նախագծով կարգավորվում են հանրային ծառայությանը վերաբերող հիմնական դրույթները, իսկ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված և առաջարկություններում հիշատակված դրույթները հանդիսանում են առանձին օրենքների կարգավորման առարկա:
	4.1. Ծրագրի 83-րդ կետով նախատեսվում է ամբողջականացնել հանրային ծառայության բոլոր տեսակների օրենսդրական կարգավորումը, այդ թվում, 83.1-րդ կետի համաձայն ներառել պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող	4.1. Չի ընդունվել.	4.1. Ներկայացվող հարցը բազմիցս քննարկվել է, սակայն նկատի ունենալով կատարվող ծավալուն փոփոխությունները, ներկայիս փուլում առաջարկվող փոփոխությունների նախատեսումը հետաձգվել է: Այս փուլում ընտրվել են թիրախային խմբերը, իսկ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ օրենքի

	ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում, մինչդեռ օրինագիծը ընդհանրապես չի անդրադառնում պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին: Սահմանված չէ ոչ առևտրային կազմակերպություններում աշխատողների մասին որևէ դրույթ (օրինակ համալսարանների ռեկտորները, դասախոսները, ԾԻԳ-երի տնօրենները և այլն).		կիրառման փուլում:
	4.2. Ծրագրի 83.2-ով նախատեսվում է սահմանել հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները, սակայն օրինագծում տրված առանձին ձևակերպումները գլոբալ են և մակերեսային, չկան օրենքում հստակ չափորոշիչներ կամ կանոնակարգեր, իսկ լուծումներ առաջարկելու դեպքում միշտ հղում է արվում այլ օրենքների (օրինակ. Հոդված 47-ում պետական կամ համայնքային ծառայությունների առանձնահատկություններից ելնելով՝ հանրային ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով.	4.2. Չի ընդունվել.	4.2. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանրային ծառայության առանձին տեսակի ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման կանոնակարգման սկզբունքները չեն կարող ամբողջությամբ միասնական լինել՝ նկատի ունենալով նրանց գործունեության առանձնահատկությունները, որոնք էլ նախատեսված են համապատասխան բնագավառները կարգավորող օրենքներով. օրինակ «Քաղաքացիական ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին» և այլ օրենքներով:
	4.3. Ծրագրի 85-րդ կետով նախատեսվում է ներդնել միասնական հանրային ծառայության արդյունավետ կառավարման ինստիտուտը, մասնավորապես 85.1 կետով առաջարկվում է սահմանել միասնական հանրային ծառայության ոլորտում լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը, մինչդեռ օրինագծով լիազոր մարմին սահմանված չէ, նախատեսված չէ թե ինչ իրավական ակտով և	4.3.Չի ընդունվել.	4.3. Յուրաքանչյուր առանձին ոլորտի համար արդեն իսկ գոյություն ունեն համապատասխան լիազոր մարմիններ: Թեպետ լայն առումով հանրային ծառայության բնագավառում լիազոր մարմինն ըստ էության հանդիսանում է հենց էթիկայի հանձնաժողովը՝ շահերի բախման, էթիկայի կանոնների պահպանման մասով: Այդ պարագայում ամենևին էլ ակնհայտ չէ, որ խոսքը չպետք է գնա էթիկայի հանձնաժողովի մասին՝ նկատի ունենալով վերջինիս կողմից իրականացվելիք կարևորագույն

	ում կողմից պետք է ճանաչել այդպիսի մարմինը /ակնհայտ է, որ խոսքն այս դեպքում չի կարող լինել էթիկայի հանձնաժողովի մասին/.		գործառույթները: Օրենքով որևէ այլ միասնական լիազոր մարմնի ստեղծումը կհանգեցնի նույն ոլորտում գործող երկու և ավելի լիազոր մարմինների՝ առանձին ոլորտում գործող լիազոր մարմնի և հանրային ծառայությունների լիազոր մարմնի գոյության, ինչը կառաջացնի գործառույթների կրկնություն և կոլիզիոն իրավիճակներ:
	4.4. Ծրագրի 86-րդ կետով առաջարկվում է նվազեցնել քաղաքական պաշտոնյաների դերը մասնագիտական անձնակազմի ձևավորման, միանձնյա հայեցողական որոշումների կայացման գործում, մինչդեռ օրինագծում չկա անհրաժեշտ հստակեցում /օրինակ Հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելուն վերաբերող օրինագծի 13-րդ հոդվածում նշվում, որ Հանրային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթով կամ օրենքով սահմանված այլ կարգով: Հանրային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու հետ կապված հարաբերությունները սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով:/	4.4. Չի ընդունվել.	4.4.Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համապատասխան խնդիրներն արդեն իսկ կարգավորված են յուրաքանչյուր առանձին բնագավառը կարգավորող օրենքներով:
	4.5. Ծրագրի 86.2-ով նախատեսվում է համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարին ճանաչել թափուր պաշտոնների համալրման պատասխանատու, մինչդեռ օրինագծի ոչ մի դրույթից չի բխում այս պահանջի կատարումը, այն դեպքում, երբ ռազմավարությունը ամրագրում է, որ այս դրույթները պետք է ներառված լինեն այս օրենքում.	4.5.Չի ընդունվել.	4.5.Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համապատասխան խնդիրներն արդեն իսկ կարգավորված են յուրաքանչյուր առանձին բնագավառը կարգավորող օրենքներով:
	4.6. Ծրագրի 87-րդ կետով նախատեսվել էր	4.6. Չի ընդունվել.	4.6. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե խոսքը գնում է վերապատրաստման արդյունքում

	կրճատել հանրային ծառայողների թափուր պաշտոնների համալրման ընթացակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերը, մասնավորապես 87.2-րդ կետը նախատեսել է ճանաչել համապատասխան գիտական և ուսումնական հաստատությունների կողմից այդ բնագավառում տրված որակավորման վկայականները, սակայն օրինագծում այս մասին նույնպես չկա նշված.		տրվող վկայականների մասին, ապա յուրաքանչյուր բնագավառի պետական ծառայողները օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստանում են նշված վկայականները, որոնք ճանաչվում են:
	4.7. Ծրագրի 87.3 և 87.4 կետերով նախատեսվում է ապակենտրոնացնել հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքները համապատասխան պետական կառավարման մարմիններում և ներդնել հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների գնահատման բալային համակարգ և մրցույթում հաղթող թեկնածուի ընտրության կոլեգիալ կարգ, սակայն օրենքում չկան տրված հստակ ձևակերպումներ:	4.7. Չի ընդունվել.	4.7.Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համապատասխան խնդիրներն արդեն իսկ կարգավորված են յուրաքանչյուր առանձին բնագավառը կարգավորող օրենքներով:
	5. Հրամայական են հանրային ծառայողների սոցիալական պաշտպանության, երաշխիքների, և վարձատրության հարցերը: Հանրային ծառայողների վարձատրության միասնական ռազմավարության անհրաժեշտության մասին բազմիցս նշվել է ՀՀ վարչապետի և կառավարության այլ պատասխանատուների կողմից, սակայն ինչպես փաստում է օրինագիծը սրանք եղել են միայն խոսքեր և բացակայում են մեխանիզմները: Հենվելով հանրային ծառայության ինստիտուտի վրա՝ պետությունը կարող է ապահովել ամբողջ ազգաբնակչության տնտեսական և սոցիալական բարեկեցությունը: Այդպիսի խնդրի հաջող լուծման համար անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող հանրային ծառայողներ, որոնք քաղաքական առումով ձգտելով չեզոքության	5. Չի ընդունվել.	Տես 5.1-րդ կետը:

	(պատգամավորների բացառությունը հաշվի առնելով), պետք է պաշտպանված լինեն օրենքով, գործեն ի շահ հասարակության, լինեն անկողմնակալ, ազնիվ, բաց և կարողանան շփվել տեղեկատվության հետ ու օգտագործեն այն ի շահ հասարակության, ինչպես նաև ղեկավարեն արդյունավետ: Սակայն այս նպատակները դժվար հասանելի են ծառայողների վիճակի անկայունության պատճառով: Ներկայումս ձեռնարկատերերի և ծառայողների կենսամակարդակի միջև ստեղծված էական տարբերությունը խոսում է հանրային ծառայողների թույլ պաշտպանվածության մասին: Մյուս կողմից հանրային ծառայողի սոցիալական պաշտպանությունը չպետք է սահմանափակվի միայն նրանց նյութական ապահովվածությամբ, այլև հաշվի առնի նրանց հոգեբանությունը, ինքնահարգանքը և գործընկերների, ղեկավարության և հասարակության կողմից ճանաչումը: Այս կապակցությամբ առաջնահերթ խնդիր է դառնում հանրային ծառայության դրական, գործարար հեղինակության ձևավորումը; Առ այդ, վերանայման կարիք ունեն օրինագծի 20, 26, 27 հոդվածները՝ ներառելով հանրային ծառայության արժանապատիվ վարձատրության և սոցիալական ապահովության կայուն երաշխիքների համակարգ: Առաջարկվում է նաև.		
	5.1. 26-րդ հոդվածի 1-ին կետում ավելացնել նոր 9) ենթակետ հետևյալ բովանդակությամբ. "9) բժշկական ապահովագրություն նրան և ընտանիքի անդամներին":	5.1. Չի Ընդունվել	5.1. Նշված մոտեցումն ընդհանուր առմամբ, իհարկե, որպես այդպիսին ընդունելի է, սակայն սոցիալական ապահովության խնդիրները, որոնք կապված են լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման հետ, պետք է ապահովված լինեն պետական բյուջեով, այլ ոչ թե կրեն հռչակագրային բնույթ:
	5.2. 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով	5.2. Չի ընդունվել.	5.2.Խոսքը գնում է ծառայողական պարտականությունների կատարման հետ

	նախատեսված երաշխիքը բնութագրական չէ միայն հանրային ծառայողին, այլ ՀՀ Սահմանադրության համաձայն յուրաքանչյուր անձի, հետևաբար այն տեղին չէ հիշատակել.		կապված հանրային ծառայողի եւ նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովման մասին, այլ ոչ թե յուրաքանչյուր անձի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված երաշխիքների մասին: Նախագծով հանրային ծառայողների համար լրացուցիչ և հատուկ երաշխիքներ նախատեսելը բխում է հանրային ծառայողի գործունեության բնույթից, պարտականությունների կատարումից և այլն:
	5.3. 27-րդ հոդվածում ավելացնել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ. «4. Հանրային ծառայողի աշխատանքի վարձատրությունը պետք է ապահովի բավարար նյութական պայմաններ իր ծառայողական պարտականություններն ամբողջությամբ և անթերի կատարելու համար, նպաստի պետական կառավարման մարմինները բանիմաց և փորձառու կադրերով համալրմանը, խթանի նրանց բարեխիղճ և նախաձեռնողական աշխատանքին:": 5. Հանրային ծառայողին տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված ամենամյա արձակուրդ, վճարելով նրան պաշտոնական դրույքաչափի կրկնակի չափով: Հանրային ծառայողի ցանկությամբ նրան ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով: 6. Հանրային ծառայողները ապահովվում են բնակարանով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Անհատական բնակարանային շինարարության համար հանրային ծառայողներին, որոնք բնակարանային պայմանների բարելավման	5.3. Չի ընդունվել.	5.3. 27-րդ հոդվածում առաջարկվող 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դրույթները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության կարգավորման առարկա: Իսկ ինչ վերաբերում է առաջարկվող 6-րդ կետի լրացմանը, ապա այդ կետով առաջարկվող մոտեցումն ընդհանուր առմամբ, իհարկե, ընդունելի է, սակայն սոցիալական ապահովության խնդիրները, որոնք կապված են լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման հետ պետք է ապահովված լինեն պետական բյուջեով, այլ ոչ թե կրեն հռչակագրային բնույթ:

	կարիք ունեն, անվճար տրամադրվում են հողատարածքներ: Հողատարածքների տրամադրման պայմանները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:»:		
	6. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայմանը նրա նկատմամբ հանրային վստահությունն է, որին հասնելու արդյունավետ ձևերից մեկը համարվում է քաղաքականապես հավասարակշռված կազմի ձևավորումը, որն ի սկզբանե կայացնում է օբյեկտիվ որոշումներ: Բացի իրավական և նյութական անկախությունից անհրաժեշտ է համապատասխան լիազորությունների, կադրային և նյութական ռեսուրսների տրամադրում: Շատ կարևոր հանգամանք է նաև, որպեսզի հանձնաժողովն ունենա կազմակերպական և գործառնական ինքնավարության անհրաժեշտ մակարդակ: Այս ամենը կնպաստի հանձնաժողովի վրա քաղաքական իշխանության ճնշման ազդեցության մեղմացմանը: Իշխանության մարմինների կառուցվածքում Հանձնաժողովը պետք է ունենա իր դիրքը, ինչը ենթադրում է հստակ օրենսդրական բազա, որը պետք է սահմանի՝ լիազորությունները, անդամների նշանակման և ազատման ընթացակարգը, ներքին կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, անդամների իրավունքները և պարտականությունները, հաշվետվությունը: Իրավական կարգավիճակն ըստ հնարավորի պետք է սահմանվի օրենքով, այլ ոչ թե ենթաօրենսդրական ակտերով (ինչպես տվյալ նախագծի դեպքում նախատեսվում է Նախագահի հրամանագրով): Ավելին, պետք է ընդունվի ներքին իրավական ակտ, որը	6. Չի ընդունվել.	6. Հանձնաժողովի գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, նրա կարգավիճակը, խնդիրներն ու լիազորություններն արդեն իսկ սահմանված են նախագծով: Իսկ ենթաօրենսդրական ակտերով պետք է սահմանվեն միայն ընթացակարգային հարցեր:

	կամրագրի ներքին վարչական և գործառնական կանոնները, հաշվետվության կանոնները և ծառայողների վարքագծի կոդեքսը: Հանձնաժողովի նախագահի դերը չպետք է թերագնահատվի: Այս ինստիտուտի ղեկավարը ինչ որ իմաստով հանդիսանում է պետական ծառայության անկաշառության մարմնացումը: Ղեկավարի ընտրության գործընթացը պետք է թափանցիկ լինի և պարունակի երաշխիքներ, որ այդ պաշտոնում չի նշանակվի անձ, որի բարոյական կերպարը կասկած է հարուցում: Հանձնաժողովի նախագահի նշանակման հարցում անհրաժեշտ կոնսենսուս հիմնական քաղաքական ուժերի միջև: Հանձնաժողովի կազմի ձևավորման հարցում նպատակահարմար է, որպեսզի առավելագույնս ապահովվի հասարակական համաձայնություն, որը պետք է իրականացվի տարբեր քաղաքական և հասարակական ուժերի միջոցով: Հանձնաժողովը պետք է ինտեգրված լինի զսպումների և հակակշիռների համակարգի մեջ, ինչը ժողովրդավարական կառավարման հիմքն է: Հանձնաժողովի գործունեությունը պետք է լինի թափանցիկ, հանձնաժողովը պետք է հաշվետու լինի Ազգային ժողովին:		
	6.1. Առաջարկվում է 33-րդ հոդվածում ավելացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. "էթիկայի հանձնաժողովը ապահովում է հայտարարագրերի հրապարակումը՝ իր կողմից սահմանված կարգով:	6.1. Չի ընդունվել.	6.1. Նախագծով հստակ սահմանված է, որ Հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը եւ ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
	6.2. 38-րդ հոդվածի երկրորդ նախադասության «և Հանրապետության Նախագահի հրամանագրով" բառերը փոխարինել իսկ նրա աշխատանքի կազմակերպման կարգը՝ հանձնաժողովի կողմից հաստատված աշխատանքային կանոնակարգով»:	6.2. Ընդունվել է մասնակի.	6.2. Նախագծի 38-րդ հոդվածի համաձայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը սահմանվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի որոշմամբ:

	6.3. 38-րդ հոդված 4-րդ կետի երկրորդ և երրորդ նախադասությունները փոխարինել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ. "Հանձնաժողովի կազմում երկու անդամ առաջարկում են ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական այն կուսակցությունները, որոնք մասնակցել են կառավարության կազմավորմանը, երկու անդամ ընդդիմադիր խմբակցություններ ունեցող կուսակցությունները, մեկ անդամ՝ մարդու իրավունքների պաշտպանը, վեց տարի ժամկետով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կազմը և նախագահը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահի մեկ տեղակալ: Ընդ որում, եթե էթիկային հանձնաժողովի նախագահը ընտրվում է կառավարության կազմավորմանը մասնակցած ՀՀ Ազգային ժողովում ներկայացված խմբակցություն ունեցող կուսակցության ներկայացրած թեկնածուն, ապա հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը վերապահվում է ընդդիմադիր խմբակցություն ունեցող կուսակցության ներկայացրած թեկնածուին: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները կարող են անընդմեջ պաշտոնավարել լիազորությունների երկու ժամկետից ոչ ավել:":	6.3. Ընդունվել է մասնակի.	6.3. էթիկայի հանձնաժողովի կազմում նախատեսվել է, որ ՀՀ Նախագահի կողմից նշանակվում են անդամներ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, վճռաբեկ դատարանի նախագահի, գլխավոր դատախազի ներկայացմամբ, իսկ ինչ վերաբերում է խմբակցություններից անդամներ նշանակելու հարցին, ապա գտնում ենք որ դա կարող է հանգեցնել հանձնաժողովի քաղաքականացմանը, ինչ անհամատեղելի է էթիկայի հանձնաժողովի կարգավիճակի և բուն գործառույթների հետ:
	6.4. 38-րդ հոդվածի 4-րդ կետում ավելացնել նոր 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. "Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը իրավաբանական անձ է: Հանձնաժողովը հաշվետու է Ազգային ժողովին:	6.4. Չի ընդունվել.	6.4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը իրավաբանական անձի կարգավիճակ չի կարող ունենալ, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն իրավաբանական անձ է համարվում

			այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող: Մինչդեռ նշված հանձնաժողովը չունի իրավաբանական անձին բնորոշ հատկանիշներ:
	7. Օրենսդրական փաթեթը կարիք ունի վերանայման, ամրագրելով այլ օրենքներում փոփոխությունների նախագծերով: Առաջարկվում է քննարկել նաև հանրային ծառայության մասին օրենսգիրք ունենալու հնարավորության հարցը:	7. Չի ընդունվել.	7. Օրենքին զուգահեռ ներկայացված են նաև «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ» կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը, որտեղ կատարվում են բոլոր անհրաժեշտ փոփոխությունները: